

Մամուլի հաղորդագրություն

**Հայաստանն ու Վրաստանը հաստատում են տարածաշրջանային համագործակցության
առաջնայնությունները**

**Հայաստան, Դիլիջան, 20 հունիսի, 2014 թվական – այսօր Հայաստան-Վրաստան Տարածաշրջանային
համագործակցության Ծրագրի համատեղ որոշում կայացնող հանձնաժողովն (ՀՈԿՀ) ընդունեց Համատեղ
Գործառնական Ծրագիրը:**

Համատեղ Գործառնական Ծրագիրը (ՀԳԾ) սահմանում է Հայաստան-Վրաստան տարածաշրջանային համագործակցության հիմնական շրջանակը. ծրագրի և շահառուների, ինչպես նաև ծրագրի իրականացման ձևերի համար գլխավոր նպատակները, առաջնահերթություններն ու պահանջները: Ծրագրի բյուջեն կազմում է 1,35 միլիոն եվրո: Ծրագիրը ներառում է Հայաստանի Լոռի, Շիրակ և Տավուշ մարզերը, Վրաստանի Կվեմո Կարտլի և Մամգիսե-Ջավախեթի շրջանները: Համատեղ փաստաթղթի հաստատումը ճանապարհ է հարթում 2014 թվականի հուլիսին դիմումների ընդունման հայտարարության համար: Հայաստան-Վրաստան Տարածաշրջանային Համագործակցության Ծրագիրը Արևելյան Գործընկերության երկրներում սկսվող ծրագրային առաջարկների համար մրցույթի չորս ծրագրերից առաջինն է լինելու:

“Հայաստանը ակտիվորեն աջակցում է տարածաշրջանային համագործակցության գաղափարին և Վրաստանի հետ առաջինն է հաստատելու ՀԳԾ-ն”, - ընդգծեց ՀՀ տարածքային կառավարման նախարարության նախարարի առաջին տեղակալ և ՀՈԿՀ անդրանիկ նիստի նախագահ Պարոն Վաչե Տերտերյանը: “Հայաստան-Վրաստան Տարածաշրջանային Համագործակցության Ծրագիրը հետագայում էլ կնպաստի հարևան երկրների՝ սահմանակից շրջանների մարդկանց բարեկամական հարաբերություններին այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, զբոսաշրջության զարգացումը, բիզնեսը, շրջակա միջավայրը, կրթությունը, մշակույթի և սպորտի ոլորտները” - հայտարարեց ԱԳՏՀ Աջակից Ծրագրի ղեկավար Պարոն Ալեքսեյ Սեկարևը:

ՀԳԾ-ն ռազմավարական փաստաթուղթ է, որը պատրաստված է ՀՀ տարածաշրջանային կառավարման նախարարության և Վրաստանի տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության համատեղ ղեկավարության ներքո, Արևելյան Գործընկերության Տարածաշրջանային Համագործակցության Աջակից Ծրագրի խորհրդատվությամբ:

ՀՈԿՀ-ն առաջնային դեր է խաղում ծրագրի իրականացման մեջ և համախմբում է Հայաստանից և Վրաստանից որոշումներ կայացողներին մեկ սեղանի շուրջ. երկու երկրների կենտրոնական պետական հաստատությունների ներկայացուցիչներին, տեղական և մարզային իշխանություններին, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններին: Կոմիտեն հերթափոխության սկզբունքով ղեկավարվում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության նախարարի առաջին տեղակալ պն. Վաչե Տերտերյանի և Վրաստանի տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության նախարարի առաջին տեղակալ պն. Թենգիզ Շերգելաշվիլիի կողմից:



Ծրագիրը հովանավորվում է Եվրոպական Միության կողմից



Eastern Partnership Territorial Cooperation
Территориальное сотрудничество
стран Восточного партнерства

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հանդիպումը կազմակերպվել է Գերմանական Տեխնիկական համագործակցության կողմից /ղեկավարող մարմին/ և ԱԳՏՀ Աջակից ծրագրի կողմից:

Ծրագրի մասին: Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության աջակից ծրագիրը (ԱԳՏՀ աջակից ծրագիր) սկսվել էր Մոլդովա-Ուկրաինա, Հայաստան-Վրաստան, Ադրբեջան-Վրաստան և Բելառուս-Ուկրաինա երկրների սահմաններում տարածքային համագործակցության ծրագրի համար բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սահմանամերձ գոտու առանձնահատկությունները, ինչպես նաև ուժեղացնել տեղական և տարածաշրջանային պետական և ոչ պետական մարմինների հնարավորությունները միջսահմանային ծրագրերը միասին զարգացնելու և իրականացնելու համար: ԵՄ քննիչները ներդրումը ԱԳՏՀ-ում 12.5 միլիոն եվրո է: Արևելյան գործընկերությունը (ԱԳ) Եվրոպական Միության նախաձեռնությունն է, որը ղեկավարվում է Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի վեց երկրներում՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և ուկրաինա: Նախաձեռնությունը նպատակ ունի ավելի սերտ հարաբերություններ ստեղծել ԵՄ և Արևելյան գործընկերության միջև՝ խորացնելով իրենց քաղաքական համագործակցությունը և սնտեսական ինտեգրումը:

Հայաստան-Վրաստան ծրագրի մասին բացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատեք ԱԳՏՀ Աջակից Ծրագրին office@eaptc.eu և/կամ այցելեք <http://eaptc.eu/en/program/view-armenia-georgia.html>

- <http://www.eaptc.eu>
- <https://www.facebook.com/eaptc.eu>
- https://twitter.com/EaP_TC
- <http://www.linkedin.com/groups/EaPTC-5109143>



Ծրագիրը հովանավորվում է Եվրոպական Միության կողմից